

Հ ա յ տ ա ը ա ը ու թ յ ու ն

(Դիմում-հայտի լրացում)

Մինչև դիմում-հայտ լրացնելը ԵՊՀ հեռակա ուսուցման դիմորդը այցելում է ԵՊՀ ընդունող հանձնաժողով սահմանված օրերին և ժամերին, ստանում է ԳԹԿ անձնական համար, որից հետո **dimord.am** կայքում գրանցվում և լրացնում է դիմում-հայտը:

ԳԹԿ անձնական համար ստանալու համար դիմորդը ԵՊՀ ընդունող հանձնաժողով պարտադիր ներկայացնում է անձը հաստատող փաստաթուղթը և քննություններին մասնակցելու համար վճարված գումարի անդորրագիրը (քննություններ հանձնելու դեպքում), քննությունների համար սահմանված գումարից ազատված դիմորդները ներկայացնում են համապատասխան հիմքերը (կանոնների 9-րդ և 45-րդ կետեր):

ԵՊՀ հեռակա ուսուցման ընդունելության քննության և մասնագիտությունների հայտագրման դիմում-հայտը դիմորդները լրացնելու համար **dimord.am** կայքի միջոցով ԳԹԿ են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ **ա/թ սեպտեմբերի 5-ից մինչև սեպտեմբերի 25-ը ներառյալ, սեպտեմբերի 25-ին՝ մինչև ժամը 18:00:**

Դիմում-հայտը լրացնելիս դիմորդը կարող է նշել մեկ բուհի մինչև **երեք** մասնագիտություն, ընդ որում առաջին հայտը գերակայություն ունի մյուս հայտերի նկատմամբ, իսկ մյուս հայտերի մրցույթին դիմորդը մասնակցում է միայն այդ մասնագիտություններում թափուր տեղերի առկայության դեպքում:

ԵՊՀ դիմորդները մասնագիտությունների լրացման հետ կապված խորհրդատվություն կարող են ստանալ հեռախոսազանգի միջոցով սահմանված օրերին և ժամերին (**Հեռ. 060 710 777**):